

լելու ատեն՝ յանկարծ տղայ մը տեսան, որ բոլորովին մերկ՝ կենդանույ պէս ոտքով ու ձեռուներով գետնին վրայ կը սողար . սկզբան չիմացան թէ ինչ տեսակ արարած է . բայց տղան զիրենք տեսնելուն պէս՝ վայրենի կենդանեաց պէս անտառին խորերը փախչիլ կը նայէր : Հասան վրան զինուորները . և տեսնելով որ իրենց պէս մարդ է , մէկէն հիւանդանոցը խաւրեցին : Լսյս տղուն բնութիւնը կէս մը փոխուեր էր . ըզուրհանգեալ սաստիկ երկնցած էին ու ինքն ալ խոտով կը սնանէր՝ երբեմն ձեռքով , երբեմն ալ բերնով փրցընելով : Հիւանդանոցէն՝ տարին զինքը խլից և համեց վարժարանը , ուր հիւանդանոցի վրայ կը քալէ ու վրան զուխը մաքուր կը պահէ . կերածը նոյն է ուրիշ աշակերտներուն կերածին հետ , և գոհ ալ կ'երեւայ իր կերակուրին վրայ . բայց թէ որ ձեռքը խոտ հանդիպի , ախորժով կ'ուտէ : Եւ պէտ տաւոր տանը մէկ տարուան կայ , բայց դեռ ամենեւին չկրնար խօսիլ . միայն թէ որ վարժարանին տեսուչը սլաւերէն բան մը հրամայելու ըլլայ կամ բան մը ըսէ իրեն , բաւականապէս կը հասկընայ . ասկէց կ'երեւայ որ ծնողքը սլաւ եղած պիտի ըլլան : Զգիտցուի թէ որչափ ատեն անտառի մէջ բնակեր է . իրեն գլխաւորը կ'ըսէ թէ տարի մը կեցած պիտի ըլլայ , և թէ պատահմամբ ան տառին մէջ կորսուեր է : Ինչուան հիւմա ծնողքը չգտնուեցան . բայց տղան թշուառաբար ոսկոր ու կաշի է , և սովորական կերակուրով ամենեւին սնունդ չառնէր . խեղճը երկար կեանք պիտի չունենայ :

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Ք

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Եղիճին՝ օգտակարութիւնը :

Լսյս մօտերս Գաղղիոյ օրագիր մը եղիճի օգտակարութեանն ու անոր այլ և այլ գործածութիւններուն վրայ հետեւալ հատուածը կը գրէ :

Երես թէ կովերը եղիճը շատ կը սիրեն , և այն կովերն որ ասով կը սնանին՝ աւելի առատութեամբ ու աւելի համով կաթ կու տան . նոյնպէս կոզին ալ աւելի ախորժահամ կ'ըլլայ : Իրաւ է որ կովերը խիստ թարմ եղած եղիճը չեն ուտեր , որովհետեւ փուշերէն կը վախնան . անոր համար սկզբան քանի մը ժամ թողու է որ չորնան , և ետքը ուրիշ խոտի հետ կը խառնեն կու տաս . ասով ամենեւին փափա չտար : Եւ որ եղիճը մանր մանր կտրտած խաշես ու հաւերու խիւսին մէջ դնելու ըլլաս , հաւը աւելի հաւկիթ կու տայ ու շուտով կը գիրնայ : Ինչի մը հիւսիսային երկիրներու մէջ եղիճին թարմ ճիւղերը կ'ուտեն՝ ամենեւին շոմինի՝ պէս եփելով , և հոն յարգի կերակուր է ասիկայ . և հոնաց մատենագիրներուն մէջ կը կարդանք որ հիներն ալ գարնան կ'ուտէին եղիճը : Տեղ ալ կայ՝ որ խեղափառները թարմ պահելու համար կը գործածեն : Եղիճէն գոյն ալ կ'ըլլէ . գեղ տեղուանք ասոր հետ քիչ մը պաղլեղ ու սովորական աղ խառնելով՝ զատկի հաւկիթները դեղին կը գունեն : Եւ մանապէս հնդկահաւերը եղիճով լաւ կը մեծնան . խաշած ու կտրտած եղիճը ան և պինդ հաւկիթի դեղնուցին հետ խառնելով՝ տուր անոնց որ ուտեն . և որովհետեւ այս կենդանին շատ ենթակայ է այլ և այլ հիւանդու-

1 ՏՃ . Ընդդէմ օրն :

2 ՏՃ . Ընդդէմ :

3 Ինչպէս նաև Հայաստան սովորութիւն կայ եղիճը կերակուր մէջ գործածելու :

Թիւներու , անոնց նախապահեատ դեղ ասիկայ ըրէ . ութը բուռ եղիճի տերև ան , չորս ալ սամիթի՝ տերև . ասոնք մէկտեղ խաշէ , և վերջը հինգ եփած հաւկըթի գեղնուցով խառնած՝ մանր մանր ջարդէ . այս գործողութենէն ետքը վեց բուռ թեփ՝ , կէս ունկի ծծումբ ու հրացանի մը գործածելու վառօդի չափէն չորրորդ մաս մը լեցուր մէջը : Եւս բաղադրութիւնը ութը ինը օր ամէն առտու տուր հնդկահաւին , բայց առջի երկու օրուրնէն ետքը՝ ծրծումբ մի դնէր մէջը . իսկ օրուան մէջ վերը ըսած սովորական կերակուրը տալու է : Երբոր հնդկահաւը կը սկսի մեծնալ , խաշած եղիճով ու գետնախորն ձորով կերակրէ զանիկայ : Եւսնապէս ձի ծախողներն ալ կենդանին ծախելէն առաջ ուրիշ խոտի հետ խառնած եղիճ կը կերցընեն անոր , որովհետեւ ասով ձիուն մորթը աւելի փայլունութի կ'առնէ : Եւս օրագիրը կ'ըսէ թէ Ըռէտի երկիրը ասոր օգտակարութիւնը ճանչցած են ու առատութեամբ կը մշակեն : Եւս որ եղիճը որ և իցէ հողի մէջ ալ կ'աճի , որչափ պինդ ու կորդ գետին ըլլայ . ամենեւին խնամք չուզեր , ամէն տեսակ օդի անբարեխառնութեան կը դիմանայ , ինքիւրեն կը բուսնի , ու մէկ ամառուան մը մէջ հինգ վեց անգամ կրնայ կտրուիլ . և ուրիշ ամէն տեսակ խոտերէն ալ աւելի շուտով կը հասնի :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Պիգուն կենդանին :

Պիգունը Լ՝մերիկայի վայրի ցուլ է , և իրեն առանձին յատկութիւններուն պատճառաւ շատ ծանօթ կենդանի է : Լ՝սիկայ պէտք չէ շփոթել օռորին հետ , որուն վրայ ուրիշ անգամ տեղեկութիւն

տուած ենք մեր ընթերցողներուն՝ . աւելի պզտիկ է քան զնա , գլուխը և մանաւանդ պոչը շատ աւելի կարճ , ու գաւակը աւելի տկար . և ուրիշ շատ բաներու մէջ կը տարբերին իրարմէ :

Լ՝ըուն ինչուան 2-3,000 լիպրա կշռէ , լու չափ կը մեծնայ , բայց միջակ մեծութեամբ պիգոնները 1,200 կամ 1,400 լիպրա կը կշռեն : Ըթը ոտնաչափ երկայնութիւն ունի՝ առանց պոչը առնելու , որ 20 բթաչափ է : Գլուխը լայն ու ցած է . աչքերը պզտիկ , սև ու սրատես . եղջիւրները կարճ ու սրածայր . և գլխուն ու կոնակին իրարու հետ միանալու տեղը կուգ մը ունի : Կուրծքը լայն . առջևի սրունքները ուժով պոչին մազերը կարճ են , բայց ծայրը երկայն , թանձր ու սևագոյն մազերով փունջ մը կայ : Զմեռը ամբողջ մարմինը երկայն ու թաւ բրդով կը ծածկուի . ասիկայ ամառը կը թափի , և մերկ , խորշոմած ու սևի զարնող կաշի մը կը մնայ , բայց միայն ճակատը , կուզը , առջևի կողմին վարերը , ծամելիքին տալին ու վիզը՝ երկայն ու խիտ մազերով ծածկուած կը տեսնես : Նակալին մազերը թանձր ու գանգուր են , և գրեթէ ոտնաչափ մը երկայն ըլլալուն պատճառաւ՝ աչքերուն վրայ իյնալով դիմացի առարկաները տեսնելու կ'արգիլեն , որով շատ անգամ ասկէք է որ կը բռնուի պիգոնը . բայց իր սուր հոտառութիւնը կէս մը ասոր տեղը կը բռնէ , և բաւականապէս կ'ապահովցընէ իր կեանքը : Իրեն մերկ մարմնովն ու երկայն մազերով ծածկուած գլխովը իրաւցընէ ահաւոր կերպարանք մը ունի : Եւ գին գլուխը աւելի պզտիկ է և մազերն ալ աւելի կարճ : Պիգոնը կը խանչէ ու ամենեւին չմոնչեր :

Եւս կենդանիս հիւսիսային Լ՝մերիկոյ բարեխառն կողմերը կը բնակի : Լ՝նթիւ բազմութիւն մէկտեղ ծովափնեայ մարգագետիններու վրայ կը վազեն . ճանապարհորդին մէկը պիգոնի խումբ մը տեսեր է որ գետի մը մէջէն

1 ՏՃ . Բէլէնէ :

2 ՏՃ . Քէթէ :

1 Տէս հտ . ԺԲ . երես 105 :